

## ՄԻ ՄԻԼԼԻԱՐԴԵՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՌԻԹԻԿԱԸ

Ամերիկան անակնկալների և անօրինակութիւնների երկր է զոնէ մեր կիսազնդի համար, կրօններ, փիլիսոփայութիւն, գեղարուեստ հին աշխարհի ծնունդ են. Ամերիկան գերազանցորէն գործնական և իրապաշտ, ժամանակ չունի կարծես մըտքի բարձրաթռիչ խոյանքներին հետեւել, մետաֆիզիկան-բարոյական խոհեցնում է կամ ձանձրացնում: Նրա վիլիսոնիայական-բարոյական խոհերն էլ չափազանց իրական, նոյն իսկ օրիգինալ են և այնքան պատշաճ մնձ ձեռնարկութիւնների, հսկայական դըրամագլուխների, յանդուզն ձեռներեցութիւնների աշխարհին: Հին աշխարհը զիտէր արդէն զանազան բարոյական հասկացողութիւնների աւետարան, մննակ Զոլան չորսը հնարեց, բայց ովկ կարող էր կարծել, թէ հարատութիւնն էլ իր աւետարանն ունի. ահա այս է, որ այժմ տալիս է մարդկութեանը նոր աշխարհը՝ Ամերիկան: «Հարստութեան աւետարան» (Pevengile da la richisse), այսպէս են անուանում յայտնի ամերիկացի հարուստ Անդրէյ Կարնեջիի, «պողվատի այս թագաւորի» բարոյական փիլիսոփայութիւնը, որի հետ արժէ որ հայ հարուստներն էլ ծանօթանան, եթէ ոչ ամբողջի, զեթ կտակի, ժառանգութեան, բարեգործութեան, վաստակի վերաբերեալ վերին աստիճանի հետաքրքիր գաղափարների համար: Շատ քիչ կամ գուցէ ոչինչ նոր է կարնեջիի «աւետարանի» մէջ, բայց երբ այն քարոզում է մի ուրիշ միջիներ, դրամագլխի, հսկայական ձեռնարկութիւնների, ահազին վաստակի, աշխատանքի հետ կապուած բազմաթիւ ցաւոս պրոբլեմների գաղտնիքին ծանօթ մի հեղինակաւոր անձնաւորութիւն, այն ժամանակ յայտնի, ամենքին ծանօթ ձշմարտութիւններն ընդունում են վճռական, հրամայող կերպարանք և կրկնակի հետաքրքրաշարժ են:

դառնում: Կարնեջին իր տեսակի մի 0վեն է, նա չի առում միայն, այլ նոյնիսկ նախ անում է և յետոյ ասում: Աւելորդ չի լինի կանխապէս ասել, որ Կարնեջիի բարեգործութիւնները, նրա մարդասիրական ձեւնարկները վաղուց հետէ աղմկում են հասարակաց կարծիքը, շատերն են նրան համարում մի իսկական մարդասէր, ուրիշներն էլ մի խելացի կեղծաւոր, շատերի հետ նա ինքը իր բարոյական գաղափարների համար վէճի է բըռնուել, ինչպէս Գլազոստոնի և անգլիացի յայտի պատեսոր Հիւզի հետ: Խոյս տալով առայժմ վիճաբանութիւններին առիթ տուող մանրամասնութիւններից՝ ևս այստեղ կը ներկայացնեմ նրա բարոյական փիլիսոփայութիւնը, նրա մի քանի վերին աստիճանի հետաքրքր մտքերը՝ օգտուելով քրանսիական մի յայտնի ամսագրից \*), որ նորերս մի ուշագրաւ ուսումնասիրութիւն հրատարակեց Կարնեջիի մասին:

### Ո՞վ է Կարնեջին:

Ամերիկացի մի միլիտարդեր, բայց ծագումով անգլիացի: Նա ծնուել է 1836 թ. էկուում: Հայրը՝ տանն աշխատող ջուլհակ, ստիպուած եղաւ ընտանիքով էկոսից գաղթել Ամերիկա, երբ խոչոր արդիւնագործութիւնը Սնդիմայում ոչնչացրեց փոքրիկ արհեստանոցները: Սնդիմէ Կարնեջին այդ ժամանակ տարն տարեկան էր: Այնտեղ, նոր աշխարհում, փոքրիկ Կարնեջին ճանաչեց խեղճութեան, չքաւորութեան բոլոր դառնութիւնները, բազմապիսի աշխատանքի բոլոր ծանրութիւնը, և անհամպիստ, անհաստատ կացութեան բոլոր անախորժութիւնները: Հասարակ օրավարձ աշխատող բանուորի բազդով սկսեց և աստիճան-աստիճան բարձրանալով հասաւ մինչև ներկայ ամենակարող միլիտարդերի, «պողվատի թագաւորի» բարձրութեանը: Սնդիմիական առկուն, ձեռներեց ողին մղումն ստանալով նոր աշխարհի տեսնուաստեղծագործող մթնոլորտում, Կարնեջիին դարձրեց մէկն այն սակաւաթիւ ընտրեալներից, որոնք բիւրաւոր անյայտ, խեղճ գոյութիւնների բրտինքի գնով կարողանում են կամ մեծամեծ հասարակական բարիքներ կամ չարիք գործել, նայելով թէ ինչպէս են զործադրում կոլեկտիվ աշխատանքի իրանց տրամադրութեան տակ գրած գրամագլուխը: Եւ եթէ Կարնեջիի կեանքը, անձնաւորութիւնը ներկայումս որեէ հետաքրքրութիւն է ներկայացնում, եթէ նրա մասին առում, խօսւում է երկու աշխարհների մամուլի մէջ, այդ նրա համար չէ, թէ նա ինչպէս է դիզել իր ահագին հարստութիւնը, ոչ էլ նրա համար, թէ նա ինչ հրէշաւոր չափերի հասցըեց Ամերի-

\*) Revue de Paris.

կայում պողվատի արգիւնագործութիւնը, այլ միմիայն նրա համար, թէ նա ինչպէս է գործազրում իր հարստութիւնը, որպիսի բարոյական հասկացողութիւններ են մղումն տալիս նրա հասարակական գործունէութեանը, ինչնվ է թեթևացնում իր անհատականութեան, իր խղճի վրայ ծանրացող հասարակական բնուը, որպիսին նրա հրէշտոր հարստութիւնն է:

Այն, ինչ որ նա անում է, գարձեալ ամերիկական է, տարօրինակ: Այսպէս նա նպատակ է զրկել հիմնել միմիայն հասարակաց գրադարաններ: Մինչ այժմ նա հիմնել է եօթհարբիւր երեսուն գրադարան-ընթեցարան, որոնցից երեք հարիւր հօթանասուն հինգը միայն Միացեալ-Նահանգներում: Միմիայն Նեւ-Եռկի զանազան թաղերի գրադարաններին նա տուել է 26 միլիոն: Նրա հիմնած գրադարաններից մի քանիսը իսկական ժողովրդական աներ են (maison du peuple) իրանց թարունով, գիմնազով, բազնիներով: Այսպէս են մանաւանդ այն գրադարանները, որ նա հիմնել է իր գործարաններին մօտիկ քաղաքներում: Պիտոսբուրգում Կարնեջիի ինստիտուտը ունի 150,000 զիղք, երկու հազար հոգի պարունակուղ գահին, շաբաթական ձրի կոնցերտներ, միւզե՝ բազմաթիւ հարուստ կոլլեցիաններով և մասնագիտական դասախոսութիւններ: Այսպիսով նա մինչ այժմ իր հարստութիւնից ծախսել է 500 միլիոն դոլլար:

Գրադարաններ, ընթեցարաններ հիմնելու նրա այս միակողմանիութիւնը, որ կարծես կրքի բնաւորութիւն է կրում, շատ անգամ կծու քննագատութիւնների և վիրաւորական ակնարկների առարկայ է դարձել, բայց Կարնեջին շարունակում է ընթանալ նոյն շաւլով: Ամեն բանում՝ կենարոնացման սիստեմի պաշտպան ու հետեղ՝ նա համոզուած է, որ իւրաքանչիւր մարդ միայն մի բան պիտի անի՞ արդիւնաւէտ կերպով անելու համար՝ թէ իր անհատական ձեռնարկութիւնների մէջ և թէ հասարակական: Կարնեջին ինքն իրան համարում է ամբողջ կեանքի ընթացքում մի էկենարոնացող, իր ազգին տալով բացառապէս գրադարաններ՝ նա նպատակ ունի իր ամբողջ հարբառութեամբ ծանրանալ հասարակաց մտքի վրայ մի ուղղութեամբ՝ իրական հետևանքի հասնելու համար:

Կարնեջին որպէս իսկական կապիտալիստ և նրա գորութեան զաղանիքին իրազեկ, բնականապէս հեռու է հասարակագիտական և անտեսական ծայրայեղ և յայտնի վարդապետութիւնները բաժանելուց: Կապիտալի և աշխատանքի, կալիտալիստի և բանուորի հանրածանօթ պայքարը նա չի ընդունում և ճըգնում է այդ անհաշտ հակադրութիւնները հաշտեցնել մի

Ընդհանուր ներդաշնակութեան մէջ, որից ընդհանուր բարօրութիւն պիտի ծագի: Այդ պրոբլեմի լուծումը չափազանց տարբեր է կոլեկտիվասների ծրագրից, բայց հետաքրքիր է հէսց նրանով, որ առաջարկողը մի միլիարդեր է: Կարնեջիի կարծիքով միլիարդերը մի խոչըր առաւելութիւն ունի աշխարհում, — թէս մի անհատ, բայց նա հասարակական օրդան է, որ պարտական է կենտրոնացնել հարստութիւնը իրան դրամ՝ յետոյ որպէս նիւթ դուրս տալու համար հասարակաց օգտին: Երաժիշտագոյութեան այսպիսով երկու մասից է բաղկացած, մէկը՝ որ սովորեցնում է, թէ ինչպէս պէտք է հարստութիւն կուտակել, և միւսը՝ թէ ինչպէս կուտակած հարստութիւնը գործադրել հասարակական շահերի համար: Եւ իր սեփական կեանքը այս փիլիսոփայութեան իսկական իրագործումն է, նա երկու մասից է բաժանուած, որից մէկը գործադրել է հարստութիւն ձեռք բերելու, և միւսը նոյն հարստութիւնը հասարակաց պէտքերի վրայ ծախսելու համար: Միլիարդները նա իրան նպատակ չի լնուի և այլ միջոց՝ դրամագլուխը նրա համար՝ ինչպէս հարստաների մեծամասնութեան համար՝ կուռք չի դարձել, նա չի սիրել դրամը դրամի համար, այլ նրանից շնորհ է մի գործիք հասարակաց բարիքի շնչքը կառուցանելու:

Կարնեջիի կարծիքով սոցիալական էվոլիւցիան, ինչի և նա յանդելու լինի ապագայում, մի անհերքելի յառաջադիմութիւն է ներկայումս, և նրա ժամանակակից նշաններն են մրցութիւնը, անհատականութիւնը և դրամագլխի կենտրոնացումը: Կուտած հարստութիւնը մի բան պիտի անել, բայց ինչ, ահա այս է ըստ Կարնեջիի ամենակարենոր հարցը, որի լուծումը պէտք է գտնել:

Հարստութիւնը գործադրելու երեք ձև կայ, ասում է նա.

ա) թողնել սեփական ժառանգներին. թ) կտակել հասարակական հաստատութիւններին. գ) կենդանութեան ժամանակ ծախսել ըստ իր հայեցողութեան: Առաջին ձևը ամենաանյաջողը, ամենավատն է, որովհետեւ եթէ հայրը կարողացել է իր որդուն շընորիւ դաստիարակութեան դարձնել հասարակաց բարիքի նախանձախնդիր, նա պէտք է նրան թողնի ճիշտ այնքան, որքան հարկաւոր է ծառայել ժողովրդին առանց որևէ վարձի. այսպիսով նա կը պատրաստի իր որդուց մի հազւադիւտ և թանկազին անդամ հասարակութեան, բայց այս բացառիկ դէպքից և այս սահմանից գուրս խելքը գլխին հայրը պիտի ասի. «Աւելի լաւ է իմ որդուն իմ անէծքը մնայ, քան ամենակարող դուլարը»: Երևակայցէք, ասում է Կարնեջին, որ մի որսի շուն բանում է մի որսանոցի բոլոր թոշունները, պահում, գերացը-

նում է և յետոյ ասում է իր ձագերին. «Ես ծանր որարդական կեանք եմ անցկացրել, հիմա դուք կարող եք հանդիսան վայելել, տհա ձեզ»։ Ես հաւատացած եմ, որ իւրաքանչիւր ընտանիքի հայր ուսերը կը թօթուի՝ տեսնելով այս շունը, որ իր ձագերին դարձրել է ճարպի գունդ ու ծոյլ, բայց ինքը՝ այդ հայրը առում է նոյնը, ինչի համար պախարակում է շանը։

Հարասութիւնը բաշխելու երկրորդ ձեր հասարակական հաստատութիւններին կտակին է, շարունակում է Կարնեջին։ Բայց դա ոչ ազնիւ և ոչ շնորհալի վարմունք է, որովհետեւ ինչ է նշանակում նուիրել մի բան, որ էլ պահել չի կարող։ Եւ այն դատերը, որոնք կապուած են իւրաքանչիւր կտակի հետ, կարծես գալիս են ապացուցանելու, որ մահից յետոյ եղած բարերարութիւնների վրայ անէծք է ծանրացած։ Յաճախ կտակողի ցանկութիւնները խեղաթիւրում, չեն կտարուում, և դա հասկանալի է—փող ծախսելու համար նոյնքան տաղանդ է հարկաւոր, որքան վաստակելու համար։ Ժառանգութիւնների վրայ գրուած հարկերի անումը շատ հաճելի է տեսնել, և այդ ձգտումը միմիթարիչ նշան է։ Պենսիլվանիայում պետութիւնը վեցըն նում է ժառանգութեան  $\frac{1}{10}$  մասը, այս ուղղութեամբ հարկաւոր է էլ աւելի հեռու գնալ։ Հարկի շափը այդ գէտքում պէտք է լինի պրոգրեսսիւ, փոքրիկ ժառանգութիւնները հարկաւոր է իսպաա ազատել հարկից, իսկ խոշորների վրայ աճեցնել, մինչև որ միլիոններների համար արդարանայ Շէլլոկի ասածը. «Միւս կէսը գնում է պետութեան գանձարանը»։ Այս հարկային ըեժիմը կը ստիպէր հարուստներին կարգադրել իրանց հարստութիւնը մահից առաջ, և սա կը լինէր հասարակական տեսակէտից ամենաօգտակարը։ «Եւ թող չը վախենան, թէ այսպիսով մեռներցութեան ոդին սպանում է, որովհետեւ նրանք, որոնք ցանկանում են, որ իրանց մահից յետոյ մարդիկ խօսեն նրանց հարստութեան մասին, աւելի մեծ հոչակ կ'ունենան, եթէ այդ հարստութիւնները հասարակական սեփականութիւն դառնան։»

Այսպիսով կտակը ըստ Կարնեջիի մի աբաուրդ է, որ ցոյց է տալիս միայն կտակարարի անկարողութիւնը կինդանութեան ժամանակ պատշաճաւոր ձեռվ անօրինելու իր հարստութիւնը, իսկ ահազին հարստութիւնը ժառանգաբար միայն իր զաւակներին կամ ազգականներին թողնելը կատարեալ անբարոյականութիւն և յանցանք։

Հաս կարնեջիի իւրաքանչիւր հարուստ մի միջոց ունի իր հարստութիւնը ազնիւ և օգտակար կերպով պէտք ածել, և դա աղքատների համար գործածելն է։ «Այսպիսով, ասում է Կարնեջին, կարելի կը լինի կեանքը գերազանց, բարձր դարձնել,

հետեւելով Քրիստոսին և ոչ Տոլստոյին, և հնարաւոր կը դառնա քացատրել քրիստոնէութեան ողին համապատասխան մեր ժամանակի կարիքներին։ Կարնեջիր կարծիքով հարստութեան այս ձեի գործադրութիւնը լաւագոյն միջոցն է հասարակական անհաւասարութիւնների դէմ։ Հաւաքական ծեռնարկութիւնների մէջ նա տեսնում է անհատականութեան և անհրաժեշտ ձեռներեցութեան ոգու ոչնչացումն, մինչդեռ իր առաջարկած սիստեմով նա հաւատացած է, որ հասարակական անարդարութիւնները կը հասցնի մինիումի, անհատականութեան ուժգնութիւնը՝ ինչպէս քաղաքակրթութիւնը՝ խնայելով հանդերձ։

Հարուսար իր հարստութեան յաւելուածը, ասում է նա, պիտի նկատի որպէս աւանդ իր մօտ զրուած, նա ինքն իրան պարտական է համարել միայն որպէս կառավարիչ և հոգաբարձու իր նմանների շահի համար։ Եթէ կենարոնացումը հնարաւոր է զարձնում լու վաստակ անել նա պիտի օժանդակի նոյնպէս լաւ կազմակերպել հարստութեան գործադրութիւնը։ Տաղանդաւոր կառավարիչը, որ կարողացել է հարստութիւն դիմել, կը կարողանայ նաև հարստացնել ժողովուրդը իր հարաւառութեամբ։

«Աւանդապահ և հոգաբարձու հասարակական գանձի՝ նա իր հարստութիւնը զործածելու մէջ պիտի իւրաքանչիւր պետութեան դէպի զանազան կրօններն ունեցած համբերող ողով առաջնորդուի, իւրաքանչիւր եկեղեցու հետեղներին նա կը թողնի ազատ իրանց խղճի հետ։ Նա, որ իրան համարում է անգլիական ցեղի հարստութեան կառավարիչ, պէտք չէ առաւելութիւն տայ որեւէ աղանդի, և իր ստացուածքը պիտի բաժանի այնպէս, որ ամենքն առանց խարութեան շահուին։ Իր արած գործը պիտի տարածուի ամենքի վրայ, և իր բարեգործութիւնը պէտք է այնքան լայնածաւալ լինի, որ ցեղի ամբողջութեանը բաժին հասնի»։

Կարնեջին աշխատանքի, գործունէութեան, անընդհատ շարժման սիրահար է. կեանքի յառաջադիմութեան խորհուրդը նա իրաւացի կերպով գտել է չը յագեցած իղձերի, անհատնում եռանդի մէջ, նա դէմ է այնպիսի նուիրաբերութիւններին, որոնք իրանց բազմակողմանիութեամբ ու մեծութեամբ բարերարուածներին, աշխատանքի, հոգսի էլ տեղ չեն թողնում։ Հարկաւոր է միշտ այնքան բարիք անել, որ ստացողն իր սեփական շահի համար կարիք զգայ իր աշխատանքը միայնել ձրի ստացածի հետ, հակառակ դէպօւմ բարերարը կարող է միայն պարագիտներ պատրաստել եռանդն ու մղումը սպանել և կատարելապէս բացասական հետեանքի հասնել։ Նա՝ օրինակ՝ խոր-

հուրդ է տալիս հասարակական գրադարան հիմնել այնտեղ, ուր քաղաքը յանձն է առնում պահպանութեան ծախըք: Ուրիշ խօսքով՝ երբեք ամբողջը չանել և միշտ կէսը թողնել ստացողի վզին: «Որիէ հաստատութիւն կատարելապէս ապահովուած աղբերներով վերջինիրջոյ գառնում է մի կուսակցութեան բաժին, և հասարակութեան ամբողջութիւնը նրանով չի հետաքրքրուում: Սյսպիսի նոռիրատուութիւնը դէմ է այն օրէնքին, որ պատփրում է օգնել մերձաւորներին միայն նրա համար, որ նրանք կարողանան իրար օգնել»:

«Հեռու չէ այն օրը, զրում է Կարնեջի, երբ այն մարդը, որ միլիոններ կը թողնի իր մահից յետոյ, անհետ կը կորչի, առանց մի կաթիլ արցունքի, առանց յարգանքի, առանց երգեցողութեան, և հասարակութիւնը նրա համար կ'ասի՝ «ով մեռնում է հարուստ, նա մեռնում է անլատիւ»: Եւ Կարնեջին այս առթիւ սիրում է կրկնել աւետարանի հոչակաւոր ասացուածքը հարուստների համար. «Աւելի հեշտութեամբ պարանը ասեղի ծակից կ'անցնի, քան թէ հարուստը Աստծու արքայութիւնը կը մտնի»:

Բազմաթիւ անգամ, ինչպէս ասացի յօդուածիս սկզբում, Կարնեջիի մտքերը և բարեգործական ձեռնարկութիւնները վէճերի և յարձակումների առարկայ դարձան, ոմանք նրան համարեցին ուտոպիստ, ուրիշներն ուղղակի վնասակար՝ նրա դոկտրինը գտնելով խոչոր արգելապիթ ընկերական հաւասարութեան: Ամենահետաքրքիր վիճաբանութիւնը ինքը Կարնեջին ունեցաւ Գլադիատորնի հետ: Pall Mall Gazette-ի մէջ Գլադիատորնը հրապարակով ընդունեց Կարնեջիի գաղափարների ամբողջութիւնը բացի մէկից. սերունդների մէջ սեփականութեան ժառանգութիւնը նա արդարացնում էր: Կարնեջին իրան յատուկ սրամտութեամբ վերին աստիճան հետաքրքիր պատասխան տուեց մինիստր Գլադիատորնին. «Սրգիւնագործական ձեռնարկութիւնների յաջողութիւնը, ասաց նա, նոյն է, ինչ որ անդիմական առաջին մինիստրի պաշտօնը, որը պահելու համար հարկաւոր է դիմագրաւել ամեն մի յարձակման: Այն հայրը, որ իր որդուն իր տեղն է գնում, ծանր պատասխանատութիւն է յանձն առնում: Նա նոյնքան վնաս է հասցնում իր որդուն, որքան և հասարակութեանը: Տնտեսական մի պանիկայի ժամանակ Ներենքում եօթ սնանկութիւնից հինգը արդիւնք էին ժառանգների անընդունակութեան: Նրանցից մէկն աքսորուեց, որովհետեւ մի օրէնքի դէմ էր ընթացել, որը նա չէր հասկացել: Խնդրեցինք նախագահին ներել նրան. առաջին անգամ էր, որ ես ինդրում էի մի յանցաւորի ներողութիւն. բայց իրօք յանցա-

ւորը նա չէր, այլ իր հայրը»: «Ժամանակներն անցել են, ասում  
է նա մի ուրիշ տեղ, երբ կարելի էր գործի մարդ ձևանալ»:

Երկու հոգեորականներ, մէկը կաթոլիկ կարդինալ Ման-  
նինգ և միւսը բողոքական պատեռ Հիւգ իրարից անկախ կար-  
ծիքներ յայտնեցին Կարնեջիի սոցիալական զարաֆարների մա-  
սին: Եւ ինչոր առանձնապէս աչքի է ընկնում առաջինը. կա-  
թոլիկ Մաննինգ երկինք բարձրացրեց Կարնեջիին՝ համարելով  
նրա «աւետարանը» զուտ քրիստոնէական, մինչդեռ միւսը, բո-  
ղոքական Հիւգ միլիոններին հոչակեց որպէս «հակաքրիս-  
տոնէական երեսյթ»: Հիւգի կարծիքով այլևս միլիոնների կարիք  
չը կայ, երբ գոյութիւն ունի ակցիաներով ընկերութիւն: Կար-  
նեջին պատասխանեց, որ այդպիսի ընկերութիւնների մէջ էլ  
վարիչը մէկ մարդ է, ամենաընդունակը, հակառակ դէպքում նը-  
րանք վերջանում են անյաջողութեամբ: Իր պատասխանը Կար-  
նեջին վերջացնում է մի սրամիտ հիւմորով կրօնաւորի հաս-  
ցէին. «Կարող է պատահել, որ պասանոր Հիւգն իրաւունք ունի,  
ասում է Կարնեջին, և թէ քրիստոնէական պրինցիպների վրայ  
կազմուած մի պետութեան մէջ միլիոնների պէտք չը լինի, այդ  
դէպքում, նա, այդ միլիոնները լաւ ընկեր կ'ունենայ, երբ նրան  
քշեն հրապարակից, որովհետեւ հաստատապէս կարելի է ասել,  
որ այդ իդէալական հասարակութեան մէջ պ. Հիւգի պաշտօնն  
ունեցող մարդկանց կարիք էլ չի լինի: Պատերի Հիւգի և իմ  
յաջորդները թեանցուկ իրար հետ՝ սիրուն զոյգ կը կազմին և  
կ'երթեան ուրիշ աշխատանք փնտրելու՝ իրանց ապրուատը հայթ-  
հայթելու համար»:

Ահա այս հետարքիր միլիարդերը և իր փիլիսոփայու-  
թիւնը: Ժամանակակից հասարակական մատառը հսանների  
մէջ ինչ տեղ է բանում նա: Անշուշտ փիլիսոփայութիւնը մի  
այնպիսի հիմնաւոր լոգիկայի վրայ հաստատուած սիստեմ չէ,  
որը կարելի ինչէր հակադրել արդէն գոյութիւն ունեցող հեղի-  
նակաւոր և իրական կեանքի տուած փաստերով արդարացող  
թէորիաներով: Կապիտալիստական «աւետարանը» չէ, որ կա-  
րող է լուծել ժամանակակից հասարակական մաքերը յուղող  
պրոբլեմների հանգոյցը: Կարելի է շատ և շատ լուրջ վէճերի և  
ըննադատութիւնների առարիայ գարձնել Կարնեջիի նոյնիսկ շատ  
հիմնական հայեացքները: Այսպէս ոչնչով նա չի կարող ապա-  
ցացանել, թէ լաւ դրամ փաստակողը, լաւ առևտրական-արդիւ-  
նաբերական ձեռնարկութիւնները վարողը, որին հասարակական  
ժամանակակից կարգերը հնարաւորութիւն են տալիս իր ձեռ-  
քում կենտրոնացնել խոշոր գրամագլուխներ, մինոյն ժամանակ  
անպատճառ այդ զրամագլուխների լաւագոյն գործադրողն է

յօդուտ ընդհանրութեան: Ինքը հէնց կարնեջին գուցէ լաւագոյն ներկայացուցիչն է իր երազած կապիտալիստական տիպերի, և սակայն իր միլիոնների գործադրութեան միակողմանիութիւնը (գրադարաններ հիմնել) չափազանց վիճելի է դարձնում նրա ընտրութիւնը հասարակական շահի մնագոյն չափի տեսակէտից: Ի՞նչ ասել ուրիշ հարուստների մասին, որոնք սրտերի տեղ քարի մի կառը ունին:

Սյսպիսով Կարնեջին իր գործով, իր հայեացքներով, իր զգացմունքներով մնում է անհատականապէս միայն եղակի և գրաւիչ երեսյթ: Եւ քանի որ ժամանակակից տնտեսական հասարակական կարգերը հնարաւոր են դարձնում դրամագլխի կենտրոնացումը մի անհատի ձեռքում, դնում են նրա քմահաճոյքի տակ անագին շարժիչ ոյժ, ինչու չուրախանալ, որ ճարտում է թէկուզ մէկը, որ զրդուած մարդասիրական զաղափարներից՝ որեւէ ձեռվ յետ է տալիս այն, ինչ մանր-մանր հաւաքել է հասարակութիւնից տարիների ընթացքում: Ինչու չուրախանալ, որ թէկուզ մի հարստի մէջ դրամի կուլաը չի սպանել բանական ու զգայուն մարդը և չի դարձրել նրան մի ոչնչացնող, ճակատազրական ոյժ, մի Մոլոխ: Թողնենք դեռ այն, որ կտակի, ժառանգութեան, իւրաքանչիւր դրամագլխի հասարակական բնաւորութեան վերաբերեալ կարնեջիի հայեացքները կարող են բաժանել նաև շատ լուսումիտ ու պահանջող թէորետիկներ: Երանի չէր, որ խեղճութեան, կարօտութեան երեսին կուգէիներ չպրտող հարուստը ամաչէր բարերարի անունից և անէր այն, ինչ նրա վրայ ծանրանում է իբրև պարաք, զիտակցելով որ իր հարստութիւնը հասարակական, ընդհանուրի ջանքերի արդիւնք է և ոչ անհատական: «Ով մեռնում է հարուստ, նա մեռնում է անպատիւ», կարնեջիի այս խօսքերը կրակէ տառերով պիտի փայլեն բոլոր այն հարուստների գոների և գերեզմանների վրայ, որոնք մեռնելով՝ կամ ամբողջ իրանց կարողութիւնը թողնում են ծոյլ, անընդունակ, այլասեռուած սերունդներին, կամ իրանց ամօթալի յիշատակը վրկելու ողորմելի փորձով փշրանքներ են ծուռմ պոռոտարոյծ տէրաչքներին մի յիմար ու կեղծ դամբանականի համար: